



ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԳԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԳԱՆ. — ՉԱՏՄԱԳԱՆ
 ԳՐԲԱԳԱՆ ԵՒ ԳԻՅԱԳԱՆ

1843-1897 • ՀԱՏՈՐ ԾԵ • ՕԳՈՍՏՈՍ

ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՅԱԳԱՆՈՒԹԵԱՆ

(Շար. տես յէջ 176)

արամեական լեզուն, այլ նա եւ իրակայ* մէջ մուտ գործելով՝ խափաներ էր տեղւոյն հին ընիկ ասորարարելական լեզուն: Փոքր Ասիոյ մէջ, ինչպէս կ'ապացուցուի գրամեներէն, պարսիկ նախարարը պաշտօնական լեզուի կարգը դասեր էին դաշին: Սակայն տեղացի հայկական աւանդութիւնն այս մասին ազդեցութիւն



ԵՏ զօրաւոր ազդեցութեան, զոր հայ դիցարանութեան վերայ ըրրէ է իրանի մտաւոր զարգացումն, հարկ է ի նկատի առնուլ նա եւ զխաւորապէս ասորական ազդեցութիւնը: Պարսկական շրջանին մէջ, ոչ միայն յաշխարհին Ասորւոց եւ ի վերին Միջագետս գործածական էր

* Ոմանք համարեցան թէ Իրակ ուրիշ բան չէ՛ բայց իրան ամուժն, այդ ծիւղ առած Արաբացուց բիրամր. (Գմմա. Ուստ. Journa. Asiat. 3^e serie, XI. 1841, p. 658). սակայն սեպա է այդ կարծիքը: Աշխարհագիրը ընդհանրապէս կը սիրաւոր թէ Իրակ ամուժն կը տրուէր յԱրաբացուց այն կողմերում կամ մահամգմերում, որոնք կը գտնուին Պարսկական ծոցոյն հիւսիսային եւ հիւսիս-արեւմտեան կողմը: Այդ մասնագիտութիւնն, որ կը գտնուի Եփրատ եւ Տիգրիս գետոց ըստուրիմ հոսանքի մէջտեղ. եւ կը հոլուի մերկայապէս արաբական Իրակ (Irak al-Arabi), կը համապատասխանէ հին աշխարհին բաբելոնացուց եւ

ներ կ'ընծայէ յունական շրջանին, եւ պիտի տեսնենք՝ թէ բազում ինչ այս աւանդութեան ի նպաստ կը խօսի: Նախ եւ առաջ մեծին Տիգրանի անմիջական նախորդք ամեն կողմէ ընդարձակեցին սահմանները Հայաստանի, որ յառաջն փորք եւ աննշան էր. իսկ այն դաւառները, յորս կը բնակէին կատաւոնացիք (Եկեղեցաց) եւ Ասորիք (Տարօն), ոչ միայն միացուցին իրենց պետութեան հետ, այլ եւ հայացուցին զանոնք: Եւ այսպէս, զիտցան Հայք միացնել եւ իւրացնել բնակչաց այն օտար տարիքը, եւ նոյնացնել զանոնք իրենց հետ՝ Բայց բնական է թէ այդ միաւորութիւնն չէր կարող ի զուտ ելնել, եթէ Հայք՝ քան զիրենք աւելի բարձր զարգացում ունեցող յոգովորէ մի՛ յամախ փոխառութիւններ չընէին:

Նախ եւ առաջ պէտք է յիշել Բարշամին շատուածք: Սորա մասին Ազգամանդեզոս հետեւեալը կը պատմէ (ՃԹ, յէջ 585). « Երթեալք հասանէր (այս է, ս. Գրիգոր) ի Դարձանաղեաց գաւառն, զի եւ անդ զանուանելոցն զուստ աստուածոցն զբարինսն կործանեցնեն, որ էր ի գեօզն Թորգան՝ մեհեան անուանեալ սպիտակափառ զիցն Բարշամեալ: Նախ զնա կործանէին եւ զպատկերն նորին փշրէին »: Կ'արժէ համեմատել զայս յոյն թարգմանութեան հետ, որ նշա-

նաւոր է յիշեալ զից անուան ձեւին տարբերութեան պատճառաւ (§ 134). παραγενομενος δε εφθασε την των Δαραναλιτων* πατριδα, Էνα κἀκει των ψευδωνύμων θεων τὰ Ιερά καταστρέψωσι. ἐλθόντες δὲ ἐν τῇ καλουμένην κώμῃ Θορδάν, ἐν τῇ ὑπῆρχεν Ιερὸν λεγοµενον λευκοδόξων δαιμόνων, βωμὸς Βαρσαμῆνης, πρῶτον τοῦτον καταστρέψαντες, τὴν εἰκόνα αὐτῆς· συνέτριψαν. Թոյնն իրիպակաւ այդ շատուածք իրք զիցուհի էր նկատու: Թունարենին մէջ զործածուած անուան ձեւն կը հաստատուի նա եւ Մովսիսի խորենացւոյ վիպութեամբ, զոր կը յիշէ այն զից պատման հաստատութիւնը պատմած միջոց (Բ, ԺԿ). Տիրքան « իջանէ ի Միջագետս, եւ գտեալ անդ զԲարշամիայ զպատկերն, զոր ի փոսկրոյ է ի բլրեբղէ կազմեալ էր արծաթով, հրամայէ տանել կանգնել յաւանին Թորգան »: Մովսիսի տուած տեղեկութիւնն կ'արդարացնէ լիովին շատուածայն ընծայուած « սպիտակափառ » մակդիրը: Արձաթեալ եւ փոսկրոյ այրանն — որուն աչքերն բլրեբղէ շինուած էին — հարկաւ իրեն շուրջը պայծառ լոյս մի պիտի փայլատակէր: Անախ Երթակացին, « Յաղպա կաթին ծրոյ » զլիտուն մէջ, կարեւոր զրոյց մի կ'աւանդէ մեզ Բարշամիայի մասին: Նախ եւ առաջ այլ եւս տեղեկութիւններ կամ մեկնութիւններ կը տայ՝ թէ կ'նշէ « ծիր կաթին », զորս փոխ առեր է յունական զիցարանութիւնէն, եւ յետոյ կը պատմէ հետեւեալը հին հայերենով. « Դարձեալ սմանք յառաջնոցն Հայոց ասացին՝ թէ խիտն ձեւերանի վահագն, նախին՝ Հայոց, զոզացաւ զարդն Բարշամայ՝ Ասորեստաւ

գաղղեացու: ՚սկ երկրորդն, որ պարսիկ պետութեամ կեդրոնը կը գրուէր, եւ ուր կը գտնուիմ չամադամ եւ Ծպահամ քաղաքներն, պարսկական իրակ (Irák Adjemi) կը կոչուի: Այս երկուքն առաջինն է, որուն յատկապէս Երակ անունը կը տրուի: Մասուղի (ՅՅ ի Պպպտատ, ի վերջո Ք դարու: եւ մեռած յնգիպտոս յամիմ 956) արարացի պատմիչը շատ կը գովէ այս երկիրը, ըսելով թէ « արեւելքն ջանն է, եւ երկրիմ սիրտն ու կեդրոնն: Գետերով ոռոգուած, արգաւանն է բոլորի՝ նրկիր մ'է, եւ բարեխառն կլիմայ մ'ունի: Բնակիչք բարեկազմք են. հասմարեօք, խորթախալանց մտրով եւ հատաստում քնաւորութեամբ մարդիկ, բայց հակահէտք ի մեղգութիւն... Իրակ՝ արեւելքի բանալիմ է եւ լուսոյ ճամապարհն »: չմմտ. Vivien de St. Martin. Diction. de Géographie universelle. II, էջ 860-861:

* Այս գաւառս Պտղոմիայ Աշտարեազուութեան մէջ (Ե. 13, 14) Δαρανασσα կը կոչուի:

1. Անանիայի Երթակուհեոյ մեացորդք բանից. Ի Լոյս ամ Ք. Գ. - Ս.Պետերբուրգ, 1877. յէջ 48:
2. Ս. Ղազարու ձեւագրին ընդօրինակութիւն մի կը պարտիմ աղնուութեան բարեկամիս՝ հ. Բ. Սարգիսեանի: — Գրչազէր մի ունի նախնին, ուրէջ մի՛ նախնի:
3. Գրչազէր մի ունի Բաղամայ. Պատկանեան՝ Բաղամայ: Երկրորդական ձեւն Բաղամ

1. Συννήθησαν ἐκ τῶν περιλαμβανῶν ἔθνων ἀποτεµορένοι μέρη... Καταῶνος δὲ Ἀκλισηγῆν καὶ τὴν περὶ τὸν Ἀντιταυρον, Σόρων δὲ Ταρσυνίτου, ὧστε πάντας ὁμογλόττους εἶναι. Strabo. XI. 528 C.

նեացյ 1 նահնոյն, զոր եւ մեք սոխորեցաք
րնախօսութեամբն Յարգապողի 2 հետ անուա-
նել 3 :

Գիտելի է թէ այս անգ Քարշամ (Քաղամ)
այսօրնակա նշանակուած է իբր ասորիւ-
տանցի եւ թշնամի հայկաց Վահագնի, Քար-
շամ անուան ձեւն կը գտնուի, ինչպէս Ա-
նանիայ շիրակունոյ գրութեան մէջ, նոյն-
պէս մի ուրիշ պատմութեան մէջ՝ զոր Մով-
սէս փոքն ասած կ'ընէ Մար Արասէն. բայց
սարակայս չկայ՝ թէ չի գտնուի այն նորա
համառօտ քաղաքացիին մէջ, կը պատմէ նա
(Ա, ԺԿ), թէ Արամ՝ յետ վճարելու արեւ-
ելեկայց հետ ունեցած պատերազմը եւ յաղ-
թելու անոնց՝ Արորեստանի դէմ՝ զարձուց
իւր գէնքերը : Յարգական ճակատամարտի մի
մէջ սպանեց « զպապականի արգիւն իւրոյ,
Քարշամ անուն՝ յազգէ սկայիցն » : « Էւ
զայս Քարշամ, վասն արութեան իւրոյ բա-
զուս՝ դործց, աստուածացուցեալ պաշտեցին
Ասորիք ժամանակս յայտիս » : Այսպէս նա
եւ այն անցեկութեան մէջ կ'երևի Քարշամ
իբրու ներկայացուցիչն Ասորոց՝ հակառակ
Արամայ (որ է հարիւր բնիկ հայ չէ), եւ որ
ընդ հակառակն կը ներկայացնէ արգային
սարբը :

Քարշինիա (Քարշամին) անուան մեկնու-
թեան համար խզարդ հետեւեալ դիտողու-
թիւնը կ'ընէ (Աղաթ. էջ 138). « Յիւրախ
ինչ այնպէս կ'երեւի թէ Քարշինիա՝ սիւալ
ընթերցում՝ մ'է Առաջա՛ս ասորի անուան
մի (զոր սակայն եւ չեմ՝ բմբոններ, կ'ընէ նոյն
ինքն լազարդ). եւ որսկհետեւ Եօրսաքի՛րց
կը տարբերի, այլ եւս անելի չեմ՝ վիճարա-
ններ այդ անուան մասին. աստ Հոփման կըր-
նայ մեզ ընդարձակ մեկնութիւններ տալ » :
Էւ սակայն Հոփման 3 միշտ համեմատեր է
զայն Բելլոփինի հետ, որու պաշտօնն յԱսոր-
ոց առ Հայս անցած կը համարի : Երկնից

արդեօք դիտմամբ եղած խանգարում մ'է Քա-
ղամայ (Βαλαάμ), հեթանոսական գարշութեւ-
նը ծածկելու համար :

- 1. Պատկանեան ունի Ասորոց :
- 2. Պատկանեան՝ յարգողի :
- 3. Akten, եւ այլն, էջ 156 :

չաստուածն կամ տէրն շատ կերպով կրնայ
ապացուցուիլ ի փիւնիկեան արձանագիրն 1 եւ
այն Բաաշաւմէն ձեւով, ինչպէս որ առ Սան-
քունիաթնի Պեկէ-աամիս 2 կամ Բեկէշա-
մէն կոչուած է այն 3. « Բեկէշամէն է (կո-
չուի) առ փիւնիկեցիս տէրն երկնից » . այս-
պէս նա եւ փիւնի միշտ արամական ձեւը
գործածեր է Բաաշաւմիւն : Ստուգիւ առ Ա-
սորիս՝ երկնից շաստուածն Բեկէշամին շատ
յարգուած էր 4 : Սակայն (ր) ստորին սիւալ
հնչումն գտնարութիւն կը յարցունէ հայեւ-
րէն անուան ձեւին գրութեան մէջ, զոր եւ
ուրիշ կերպով կարելի չէ բացատրել՝ բայց
միայն իրանեան լեզուին արգիցութեամբ՝ ու-
րան միջոցաւ անցեր է հայերենի մէջ : Պէտք
է յիշել թէ, օրինակ իմն, Babiru եղեր է
Babilu, Naditabira եղեր է Nidintav-
bil, եւ այլն : Սակայն այս բանս կարելի չէ
մտածել՝ բայց միայն այնպիսի ժամանակի կամ
շրջանի մէջ, յորում իրանեան արգիցութիւնն
ընկերութեան բարձրագոյն գասակապին վե-
րայ (որ միայն նշանակութիւն ունէր Հայաս-
տանի մէջ) զօրացեր եւ օրինաւոր եղած էր :

1. Յաջորդին համար հմտօ. E. Meyer, Art.
Baal առ Roscher myth. Lex. Sp. 2872.

* Այդ անունը կը գտնուի Սա եւ առ մեզ գործ-
ածուած Բարշամիայի համար. ինչպէս, օրինակ
իմն. Յալոյթը Սրօնցիմ Պէ-աամիս կը կոչէ զայն.
(տես Հէն Հաւառք Հայոց Բ. 2. վ. Այլշամի. յէջ
512):

2. Եւսեր. Պատրաստ. ասեռ. Ա. Ժ. 7 :

33 Մ. Էփն, իւր Սախիշեալ « Recherches sur
le paganisme arménien » գրուկիմ մէջ, թէ եւ
կը միտքամի յարգելի հիղծակիս կարծեաց՝ սոյմ
ղց ատրակամ ծագման մասին, այլ կը տարբե-
րի անուամ ստուգարամութեամ մէջ՝ նա կը ճոյժա-
ցնէ գրարշամին՝ Ասորիստանայց Նեի կամ Նե-
իւն պատերազմի շաստուածն ճիտ, որ մերկ կը
կոչուի եւս Քար. զքսէ Սա. « Նեի կը թարգմանուի
տէր, իսկ յն կը ճշմանիէ անուն. մոյժպէս այլ
Քար, կը յաւելու, կը ճշմանիէ տէր, եւ Էամ, շիւ կը
համապատասխանէ ինի՝ որ կը թարգմանուի տ-
նուն » . եւ աստի կը մտնեցունէ թէ՛ Քարշամին
(Քարշինիան) է Նեի կամ Քար զքսէ, զոր կը պաշ-
տէիմ Ասորիստանցիք իբրու իրօնց թագաւորաց
պաշտպան չերակէնս : Սոյմ կարծեաց հակառակ
կը գիմուի շատ բանսերը, որք Քարշամին ծն-
գումը կը զնիմ ի Բաաշաւմէնէ, որ կը ճշմանիէ
ստուգիւ « տըր կամ աստուած երկնից » : — Բեկ-
շամինի մասին գտնու. Սա եւ Pluche (1688-1761),
Histoire du ciel, t. I, chap. II.

Գարձեալ, որչափ գիտե՞նք, թուի թէ այս բանս արդէն վաղուց իսկ կատարուեր էր Տիգրանի ժամանակէն սկսեալ . եւ այսոր հետ շատ լաւ կը յարմարի այն՝ որ կ'աւանդուի թէ ստուգիւ Տիգրան թագաւորն մտածեր է Հայաստանի մէջ սոյն պաշտօնս : Գարձեալ, ինչպէս կ'երևի ինձ, Բաալշամինի եւ Բարշամինի նոյնութիւնն բնաւ ո՛ր եւ է կասկած կամ դժուարութիւն չի հաներ այս բանիս հակառակ : Հետեւաբար Բարշամին արամեական շատուածն է երկնի եւ աշխարհի : Եթէ մինչեւ ցարդ յտալ բերուած հետեւութիւնք ուղիղ են, միանգամայն լոյս կը սփռէ այս բանս պարզաբար այն արտաքին եղանակին վերայ, որով կազմուեր է հայկական պանթոնն : Արքունի հրամանաւ կը յափշտակուի զից արձան մի եւ կը տարուի իւր ասորի հայտնիքէն, եւ իսկոյն Հայաստանի մէջ կը կազմէ պաշտաման մի կեդրոնը : Այս ուրեմն այդ կրօնական պաշտօնն պարզաբար բարձրագոյն իշխանութեան կողմէ հաստատուած է . յարեւելս բնդանրապէս միշտ այսպէս եղած է : Ելամացի թագաւորին ձեռքով Արևուտն տարուած արձանն Շոշ քաղաքին մէջ Նա՛նայի պաշտաման կեդրոնը կը կազմէ . եւ այդ պաշտօնն արտաքին նիւթական արձանին հետ կը կապուի : Ինչպէս որ Անահիտ դիցուհին՝ իւր ոսկի արձանին համար՝ հռչակուած եւ փառաւորուած է երգերուն մէջ, այսպէս նա եւ երկնից շատուածն իւր արձանին պատճառաւ կուսեր է սփիտակական : Սակայն մասնաւոր դիտողութեան արժանի է այն հանգամանքն, որ այս պէս նոր բերուած շատուածն սերտ յարաբերութեան մէջ կը մտնէ՝ երկար ժամանակէ ի վեր աշխարհին մէջ հաստատուած Վահագն գից հետ, եւ այս յարաբերութիւնս կը դռնէ իրեն զիցարանական բացարուծիւնը : Ըստ այսմ յայտ է՝ թէ Տիգրան թագաւորին ժամանակներէ տակաւին կենդանի Լը յատկապէս առասպելներ կամ զիցարանական գրոյցներ ստեղծող զօրութիւնն ժողովրդեան : Այս բանս կը հաստատուի նա եւ ուրիշ դիտողութեանը : Տիգրանայ՝, եւ իւր անմիջական

նախորդաց եւ յջորդաց ժամանակներն հըռչակուած են մասնաւորապէս զիւրացնական երկոց մէջ : Այս երգերուս մէջ այնպիսի ակնարկութիւնք կան, զորս ուղիղ մտքով առեր են ժամանակակիցք, իսկ յետինք սխալ հասկըցեր են զայնս, ինչպէս՝ օրինակ իմն՝ Գոմեոտոս Կրբուզդանի պատերազմի յիշտակութիւնն . վրաս զի այն երգերու կամ գրոյցներու յօրինումն ժամանակադրուէն պէտք չէ շատ հեռու դնել այն զէպերէն՝ որք կ'երգուին նոցա մէջ : Եւ այսպէս, այն ենթադրութիւնն, թէ Տիգրանայ ժամանակամիջցին քերթողական ստեղծող զօրութիւնն նըպատուար եղեր է զիցարանական երկոց, անհաւանական չերեւիր :

Նոյնպէս ասորական ծագումն ունեցեր է Ասողի* : Իւր գլխաւոր մեհեանն Աշտրշատու մէջ էր, ինչպէս կը հաստատէ զայս Ազաթանպետի վաղ իսկ յիշեալ վկայութիւնն . « Եւ երբորդ մեհեանն անտանեալ Ասողկան զից, սենեակ վահագնի կարգացեալ ըստ յունականին, սր է ինքն Ափրոզիսէն » : Մովսէս Խորենացին կը պատմէ

սծած տարածամ տեղեկութեանց մէջ, զիւրացանքս թեանց Տիգրանը կը շքութէ կերպարմարդ Տիգրանայ հետ, մինչդեռ բնականաբար ժողովրդեան հռչակածն էր արքայից արքայ կուսուած Տիգրանն :

* Ազգային անճշտութիւնն համարի զԱսողի՛ սեփականն հայ անուամբ եւ անմասն օտարաց՝ դուստր նոյն, ջրնիցեղն յիջող ծնուած, եւ այլն . (Հին հասարակ Զայց, էջ 279) . Մ . թորինացին, իւր Ա գրոց Զ գլխում մէջ թերտոստամ Սիրիլային ասանութիւնը մէջ կը քննէ, յորում Ասողին՝ քար կ'ըսուի Տիսամայ եւ Յապետոսի, որով եւ դուստր կը լինի Տիստութեան, սր է՝ նոյն Գարձեալ ստրա անուամբ յօրինուած այլեւայլ ստեղծեր կը գրուած ընդ մի աշխարհին մէջ, ինչպէս Ասողաբերք կամ Ասողկան քերթ ճարտոյ կողմերը, զոր իւր թէ Ասողին ջրնից տուած է, ինչպէս կ'ասանուի, իւր ջրուսն իզորս ապահովութիւնն հասարկ դարձուալ ուրիշ Ասողաբեր մի աշտոնից գուտարի մօտ . այսպէս նա եւ Ասողի բուր, Ասողի գետ, եւ այլն, յորմ յայտ է թէ մըքամ յարգուած էր առ ձայն սոյն զիցունիս :

1. Ազաթ. էջ 603. — Ափրոզիսէն անուան նըկատամբ հետեւեալ դիտողութիւնը կ'ընէ Լազարի (Ազարանգեղոս էջ 138) . « Այսպէս հայ բնագիրն պահեր եւ յունական հղովմանց վերջաւորութիւնը, որ յիւրաքի նորա բնագիր լինելուն նպատակաւ չէ » : Մար Միքայէլի (ա-

1. Միայն թէ Մովսէս Խորենացին, իւր գործ.

Թէ ինչ կերպով հաստատուեցաւ զիցուելոյս պաշտօնն Տիգրանն թագաւորին ժամանակ (Բ, ԺԿ). « Բայց զԱփրդիսեայ զպատկերն Բրբե Երակղեայ տարիտարի՝ առ նորին պատկերին Երակղեայ հրամայեաց կանգնել յաշտաց սեղինս * » : Թալմաս արժուունի (յէջ 54, սպագր. Պետրոսի, 1887) կը պատմէ, թէ Արտաշէս թագաւորին տիկինն Սաթի-նիկ « ոչ ի բաց մերձեցաւ ի կոոցն Ասարղիայ սնուանեալ պատկերին » : Միւս յաճախ յիշատակութիւնը Աստղիայ, որք կը գտնուէին ժամանակագրաց մօտ, որիչ բան չեն՝ բայց միայն թարգմանութիւնը յոյն՝ Ἀφροδίτη կամ Ἀστέρια անուանց : Գուցէ Հոֆմանի բրած ենթադրութիւնն այս անուանմանուն շատ ճիշդ է¹, այսինքն՝ թէ Աստղիկ թարգմանութիւնն է ասորի Կaukabta բառին, որ կը նշանակէ միանգամայն « աստղիկ » կամ « փոքրիկ աստղ », արուեստակամ լուսաբեր մարտիկը « փոքրիկ բախար »², գանազաններու համար լուսնթաղէն, որ « մեծ բախա » կը կոչուի : Այս ուրեմն Աստղիկն ուրիշ բան չէ՝ բայց հայացումն Բելլիս ասորի զիցուելոյն** է Սոյն ենթադրութիւնս հաստատուն կռուան մ'ունի այնու որ իրեն նախընտրած մեհեանն կը զբառուէր Տաթոն գաւառին մէջ, որու բնակիչք նախնաբար ասորիք Լին, եւ յետոյ ժամա-

նակու հայացեր են Վանայն, իբրտ ներկայացուցիչ հայ աշխարհակալներու, սերտ յարաբերութեան մէջ կը մտնէ երկրին բնիկ զիցուելոյն հետ :

Մի եւ նոյն ազգեցութեամբ մաս գտեր է հայկական աստուածոց խմբին մէջ նա եւ Նանա կամ Նանէա զիցուելոյն : Քաղղէացի նախկին ժողովրդեան պաշտած զիցուելոյս մասին, զոր յետոյ հասարակ եռանդեամբ պատուեցին նա եւ Ելշամացիք եւ Սեմականք, Հոֆման որոշիչ կերպով նստեր է առանձին գրութեան մի մէջ¹, իսկ իրեն յատուկ հայկական պաշտաման մասին գալով, զլիսաւոր մեհեանն կը գտնուէր երկրին արեւմտեան կողմը, որ յառաջն սեմական էր, ուր կը բնակէին Կատաւանացիք : Գիցուելոյս անունն յիշուած է միայն Ազաթանդեգոսի լաիոնական ոճով գրուած տեղեկութեան մի մէջ (յէջ 587). « Եւ անտի ընդ գետն Գալլ յայնկոյր անցանէին, քանդէին զՆանեական մեհեանն դռներն Արամազդայ ի Թիւր յաւարն : Եւ զպանծա երկրոցն մեհեանացն՝ աւարեալ ժողովեալ ի նուէրս սուրբ սպասուեկեղեցեաց Աստուծոյ թողին տեղեօքն հանդերձ յ Յոյնն կ'ըսէ Ἀθηνᾶς βωμόν, Մովսէս խորեանցի եւս մի եւ նոյն յունական յորդովումը կու ապ զիցուելոյս* : Սակայն նա Հայաստանի մէջ, հակասակ Անահայ՝ մայր զիցուելոյն, թախ ունենալ պատերազմի զիցուելոյ կուտակն խիտ բնաւորութիւնը : Գարձից զիտելի բան մ'է, որ հայ աստուածուհիք բնոյնանորայէս միշտ յարնուութիւններ ունին զից կամ աստուածոց հետ. ինչպէս ք որինակ իմն, Անահայ եւ Նանէա՝

սորոյն) հայ թարգմանութիւնն այլ նմանապէս (էջ 134) նոյն Ափրադիտէս ձեւը բարձրած է, երբ Քրիստոսի զերեզմանին վերայ յեղեալ զիցուելոյն արձանի կանգնեցուն պատմութիւնը կ'ընէ. « պատկեր Աստղիայ, որ է Ափրդիտէս » : Այլ գուցէ թարգմանիչն այդպէս գրեր է, յիշելով պարզաբար Ազաթանդեգոսի նման բացատրութիւնը :

* Մ. խորեանցի ի Պատմութեան սրբոց Հոփոսեմանց կը յիշէ ուրիշ միջին մ'այլ Աստղիայ « Բ գլուխ իրինմ Պաղատոյ », ուր « տուն Արամազդայ եւ Աստղիայ մեծաւէիմ » կ'ըսէ : (Մ. խորեանցի. 1865, էջ 301) :

1. Akten, եւ այլն, էջ 136 :
 ** Մ. Էմիմ (Recherches sur le pagan. armén. յէջ 15) հայերէմ աստեղ հետ Ոոյմ կը համարի սամուկրտ տա ի զամիկի aster ի staré բառերը : իսկ զիցուելոյն Աստղիկ Ոոյմ կը համարի պարսիկ Tishtar, եւ Tashter, եւ Ասորիստանացի Ishtar զիցուելոյն հետ :

1. Akten, եւ այլն, յէջ 130-131 :
 2. Այսինքն է Անահայոյ մեհեանն, որ յեւրէջ կը գտնուէր, եւ Նանէայի՝ որ ի Թիւրն աստեղիք :

* Գիտելի է թէ Մակաբայնցոց գրոց (Բ, զի. Ա, 13-14) մէջ երկուց կը յիշուի Նանեայ անուն մը ճշդի յունի մասմաստ որ կ'ըսէ. ἐν τῷ τῆς Ναυαίας ἱερῷ ἢ τῶν περὶ τῆν Ναυαίαν ἱερῶν. իսկ թող սեպոս իւր Հնութիւնք Կրեակնք (ԺԲ, 13) գրքի մէջ կը կոչէ այլ զիցուելոյն՝ Ἀρτεμις անունը : որ սխալ է ըստ իմ ճիշտն. զի սա կը համապատասխանէ մերս Ամմոսայ, միջն ժողովրդի պիտի Լիւթեր թարգմանի գայն յունարէմ Ἀθηνᾶ :

Արամազգայ գտերը են, իսկ Ասողիկ՝ Իրրեւ տարփաւոր Վահագնի կը ներկայանայ:

Ազաթանգեղեայ հայ բնազրին մէջ, ինչպէս սովորական է այս, շունիք մենք դեցուհայն բնիկ անունը, այլ միայն զմարտաբար անունէն կազմուած ածականը, « Նաճակահան մեհեան »: Արդ, համեմատելով զայն, օրինակ իմն, « Ասիա, առիական » անուանց հետ, կրնանք հեռեցունել թէ « Նանէական » կազմուած է « Նանէա » յէն: Եթէ ուղիղ է այս, այն ժամանակ Նանէա ո՛չ եթէ արեւելեան՝ այլ յունական անուան ձեւով կը ներկայանայ մեղ: Այս ուրեմն Հայք ո՛չ թէ ուղիակի յարեւելեայց տներ են այդ գիտահին, այլ յունական միջնորդութեամբ, որ է՝ յունացած Ասորիներ: Գլթ չի հաւաակիր բնաւ այս բանին՝ աստուածուհոյն պաշտաման հաստատուելուն նկատմամբ Մովսիսի առած տեղեկութիւնն:

Հայոց կրօնական զարգացման վերայ եղած արամէական ազդեցութիւնն, բաց ի յԱսորոց փոխառեալ աստուածներէն, կը ցուցուի նա եւ ուրիշ մի քանի աւելի ընդարձակ հանգամանիւներով: Հայ քրիստոնեայ աղբւրաց մէջ հոգեւոր պաշտօնէից համար զործածուած բառերն են շուրճ (սովորական անուն պաշտօնէից հեթանոս դից) եւ քահանայ* : Լագարդ¹ այս երկու անուանցս ծագումն այլ ասորերէն կը դնէ: Այս բանն կը ցուցնէ թէ Ասորիք ինչպիսի մեծ ազդեցութիւն ունեցեր են հայ հեթանոս կրօնից վերայ:

Դարձեալ, Հայոց առասպելախառն աւանդութեան մէջ պահուեր է նշանաւոր եւ յայտնի յիշատակութիւն մի այն զօրաւոր ազդեցութեան, որ նախնաբար սխերիմ թշնամի էր ասորական կրօնից եւ զարգացման: Ինչպէս որ կանխացիք ամէն տարի, վահանով եւ աւելերով դիմուածք հանդիսաւոր թափօրներու մէջ, իրենց երկրին սահմաններէն դուրս կը վարէին օտար շատուածները. այսպէս նա եւ հին հայկական աւանդութիւնն

պահեր է յիշատակը կառայն նախնական ծագողեան գիտակցութեան, զոր կը ներկայացնէր Հայի դիցազգն անուանեալ (Պրօս էփօսյուս), ընդդէմ ասորական գիտակցութեան, որու ներկայացուցիչն էր Տիտանեանն Բէլ՝ անձնաւորուած իրրու նախկին թագաւոր: Հայկայ եւ Բելայ պատերազմին մէջն երկու պատմութեանց մէջ եւս պահուած է, նախ Մ. Խորենացայ գրքին մէջ, եւ յետոյ առ Ստոյն—Ալաթմանգեղեայ, որ կ'ըսէ թէ՛ գտեր է զայն « ի մատեանն Մարասայ փիլիսոփայի Մծուրնացոյ »: Ըստ գիտողութեանց Գուշմիդի² եւ մանուանդ Պ. Ֆետտերի³ կրնանք ապահովապէս հաստատել, թէ զս ուրիշ բան չէ՛ բայց միայն քաղուածոյ համառոտութիւն Մար Արաս կասիւնայի, որ իրբեւ սղբիւր ծառայեր է Մ. Խորենացայ: Այդ քաղուածին մէջ կը թափանցուի միայն զիւրաւոր եւ կարեւոր կէտերն. մինչ Մովսէս շատ յաւելածներ բրբր, ճսխացուցեր եւ ըստ կամն այեւայլ փոփոխութիւններ բրբր է: Այս պատճառաւ Հայկայ եւ Բելայ մէջ եղած պատերազմին հատուածը մէջ կը բերեմ ասո՛ւ՝ Անանուսին քաղուածին համեմատ՝.

« Յայնմ ժամանակի թաղաւորեաց ի Բելան որսորդ հսկայ Բէլն Տիտանեան ճոխն շատուածացեսլ, որոյ հօր զօրութեամբն սաստիկ յոյժ գեղ պարանոցի իւրոյ: Եւ էր իշխան ամենայն ազգաց՝ որ սիւեցան ի վերայ երեսաց ամենայն երկրի, որոյ արաւ »

1. Սերէոս, հրատ. Ք. Պատկանեանի, էջ 1. Փոխանակ Մծուրնացոյ Ռաուճգարուէր հանճարեկ ենթադրութեամբ մի կը ընէ Մծուրնացոյ (Մծուրացոյ), որուն կը հաւանին նա եւ Տետտեր եւ Կարիէր: ZDMG, 1886 էջ 495: Սակայն հարկաւոր չէ այդ սրբազրութիւնն: Մար Արաս բնիկ ճննդեամբ էր Մծուրքէն (= κλίμα Μοδούρω). Գէորդ կիպր. էջ 183: Մար Արասոյ ժամանակը Հայք եւս կը զրէքն միայն ասորի կամ յոյն լեզուներով, եւ եթէ Մովսէս իրաւամբ կը կոչէ զենքը ասորի անն, այն է պատճառը՝ որ յիրաւի այն ժամանակ քաղմութեւ ասորիք կը զսնուէին Հայաստանի հաւաքաւորն կողմերը:

2. Kl. Sehr. III S. 320 ff.
3. Festgruss an R. Roth 1893 S. 81 ff.
4. Սերէոս, եւ այլն, էջ 3:

* զերիմո առ մեզ ընդամբրապէս Յմարիտ Աստուծոյ պաշտօնէից համար զործածուած է: *

1. Arm. Stud. էջ 160 եւ 157:

րեալ առ ալօք կախարդութեամբ հնարս և հրա-
մանս թագաւորական ամենայն արգաց. և
հպարտութեամբ մարտաւանդութեան իւրոյ
կանդնեաց զպատիւնն իւր, և ետ երկիր
պզգանել իրրեւ Աստուծոյ, և զոհս մատու-
ցանել :

« Եւ վաղվաղակի կատարէին ամենայն աղբիւ
զհրամանս նորա, բայց մի ոմն Հայկ անուն
նահապետ աղբացն ոչ հնազանդեցաւ ի ծա-
ռայութիւնն նորա . եւ ոչ կանգնէր ի տան
իւրում զպատիւր նորա . և ոչ մեծարէր բզ-
նա աստուածօրէն շքով :

« Եւ էր անուն նորա Հայկ, ընդ որում
ծնաւ արքայի Բելայ սխտիթիւն մեծ : Եւ զօ-
րածողով լինի Բէլ արքայ ի Բարելոն եւ
զիվէ գնայ ի վերայ Հայկոյ սպանանել գնա :
« Գայ հասանէ յերկիրն Արարոյայ ի տունն՝
որ էր նոցա հայրենի՝ փր շինեալն էր ի լեռն,
ստին . եւ Կաղմոս փախտական գնաց ի
Հարբ առ հայր իւր ազգ առնել նմա . եւ
աւէ . Գիմեալ քայ Բէլ արքայ ի վերայ քո ,
եւ եկն եհաս մինչեւ ի տուն անբք . եւ ես
հնաւ իմոյ եւ որդուք անաւտիկ կամ
փոխտատական :

« Առնու Հայկն զԱրամենակ եւ զԿաղմոս
զորդի իւր . եւ զորդիս նոցա եւ զորդիս եօ-
թանեցոնց զսանբաց իւրոց , արս հսկայս եւ
նուազունս թուով : Եւ ի դիմի հարկանի Հայկն
Բելայ արքայի . և ոչ կարաց զղէմ ունել
բազմութեան արանց հսկայից սպառազինաց :
Անդ ի դիմի հարկանի Հայկն Բելայ, եւ
կամեցաւ ըմբռնել գնա Բէլ ի բունս իւր :
Խոյս ետ Հայկն յերեսաց նորա, եւ գնայր
նա փախտական . եւ Բէլ գհետ նորա երթալը
պնդադոյն հանդերձ դիմակրանս իւրով :

« Չսեղի կայաւ Հայկն, եւ աւէ ցնա . Չի
պնդեալ գաս գհետ իմ . դարձիր անդրէն ի
տեղի քո՝ զի մի մեռանիցիս այսօր ի ձե-
ռաց իմոց . քանզի ոչ յրիպի նետ իմ իմիք :
Պատասխանի ետ Բէլ եւ աւէ . վշանս այնու-
րիկ՝ զի մի անկցիս ի ձեռս մանկաւոյ իմոյ եւ
մեռանիցիս . այլ եկ ի ձեռս իմ, եւ կեանց
ի տան իմում խաղաղութեամբ, ունելով ի
գործս զմանկունս ի տան իմոյ զորսականս :

« Պատասխանի ետ նմա Հայկն եւ աւէ .
Շուն ես դու՝ եւ յերամակէ շանց դու . եւ
ժողովուրդ քո : վշանս այսօրիկ թափեցից իսկ
այսօր ի քեզ զկայարձն իմ : — Եւ արքայն
Տիսանեան սպառազինեալ, եւ մտահայեցեալ
ի կուս սարաւազինութիւն անձին իւրոյ :

« Եւ Հայկն Արթիթայն մերձենայր և ունէր
ի ձեռին իւրում զաղեղն, որպէս հեծան
հօր մայրափայտեայ : Եւ Հայկին զտեղի
կալեալ պատրաստի ընդղէմ նորա աղեղամբ :

« Եւ կանգնէ զկայարձնս ի գեանոյ ընդ
ինքեան յաղեղն՝ սկայօրէն կամօրին, եւ
րնդ զիրկս մտեալ զօրութեամբ հարկանէ
նեախ զտախտակս երկաթիս, եւ ընդ պղնձի
վահանն ի թժփ անցուցանէ ընդ մտեղէն ար-
ձանն յերկիր խարսիեալ մտաբեալ նետն . եւ
վաղվաղակի յերկիր կործանեալ զաստուածա-
կարծեալ կոկայն . եւ զօրք նորա փախտաա-
կան լինէին : Եւ նոցա գհետ մտեալ թա-
փեցին ի նոցանէ երամակս ձիոց եւ ջորեաց
և ուղտոց :

« Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր՝ եւ չորս
կալաւ Հայկն զերկիրն Արարոյայ . եւ բնա
կեցաւ անդրէն ազգաւ իւրով մինչեւ ցայժմ՝
Եւ ի ժամանակի մահուանի իւրոյ եւ գնա
կալուած ժառանգութեան կազմեալ թողին
իւրում որդւոյ Արամենակոյ եղբօր Հար-
մայի » :

Այս հատակոտորս բուն հարազատ հե-
թանոս զրութիւն մի չէ . զի սկզբնաւորա-
թիւնն իսկ յայտնական կը ցուցընէ բրիտ-
աննեայ քոյի մի փոփոխութեան հետքը, եւ
բարեխցի թաղաւորին աստուածապէս պաշ-
տուելու հրամանն անտարակոյս նմանութիւն
մ'է Գանիելի զրոց : Բայց յետագայ պատ-
մութիւնն, հանդերձ երկու զիւցազանց բոլո-
րովին զիւցազանբզական նախասալից խօսքե-

թեան վարժիչ պիտի լինէր Բարելացւոց Թա-
զաւորին քով :

1. Պատականնի հրատարակութիւնն եւս
ուշնի յաղեղն : Միջոցնեկս չեն ներկել ռուսաբա-
նելու այս մթին եւ տարակուսական խօսքը :
Մովսիսի համապատասխանոց տեղեկութեան
մէջ եւս (Ա, ժԱ) Հայկոյ ճարտար հարուածն
զլեւաւոր կէտն է պատերազմին բոլոր պատ-
մութեան մէջ :

1. Ճարտար զինաշարժ լեւոնորդին որսորդու-

բով, հնութեան եւ սկզբնադիր լինելու գրոշմը կը կրէ ։ Գարձեալ Բէլ շատուծոյ նուաւ սացումն, իբրու դիցազն մի անցեալ ժամանակաց, հարկ չկայ կարծելու թէ քրիստոնեայ գրչի մի փոփոխութեան արդիւնք է այն ։ Բանապաշտութեան (rationalismus) հետեանք էր այն, որ ընդեզացեր եւ ստիբրական դարձեր էր յետ Սուեաոնիոսի եւ Փիլոնի բիւրացեոյ ։ Բելլայ վերադիրն « ճորն շատուածացեալ » քրիստոնէական սրբադուժիւն մ'է փոխանակ « աստուածացեալ » բացարութեան ։ Բայց վերջապէս այդ պատմութեան սկզբնական զազափարն ամենեւին քրիստոնեայ մատենագրի չի պատկանիր ։

Գարձեալ ուրիշ առասպելայօջ պատմութիւն մի ասորական ազգեցութեան վաւերագիր մ'է, Շամիրամայ գրոյցն լսել կ'ուզեմ, որ ուրիշ բան չէ՝ բայց միայն Արամայ օրդւոյն Արայի վերայ անեցած նորա սիրոյն վէպն ։ Նմանապէս այն դէպքն այլ մէջ կը բերեմ աստ Սերէոսի քաղուածին համեմատ ։

« Էլ Շամիրամ կինն Ասորոց արբային Նինոսի, քանզի լուաւ վասն զեղեցկութեան նորա եւ կամեցաւ առնել ընդ նմա բարեկամութիւն, որպէս զի կատարեցէ զկամս նորա պոռնկութեամբ¹ ։ քանզի ըստ լրոյ համբաւոյ յոյժ ափեալ էր ի վերայ անձին եւ զեղջ նորա զեղեցկութեանն ։

« Զի ոչ գտանէր յայնձ ժամանակի նման նորա այր ոք՝ ամենեւին այր պատկերածօխ ։ յղէ առ նա հրեշտակս պատարաջօք եւ կոչէ զնա առ ինքն ի Նինուէ ։ Իսկ Արայն ոչ զպատարազն նորա ընկալաւ եւ ոչ յանձն առնու երթալ ի Նինուէ առ Շամիրամ ։ ապա առնու զգօրսն իւր Շամիրամ, եւ զնայ ի վերայ նորա ի Հայս ։ Գայ հասանէ ի գաշան Արայի, եւ տայ պատերազմն ընդ Արայի, հարկանէ զգօրն, եւ սպանանէ զԱրայ ի պատերազմին ։

« Էլ հրամայէ Շամիրամ տանել զի նորա ի վերնատունն ապարանից իւրոց, եւ ասէ ։

Էս ասացից աստուածոց լիզուլ զվէրս նորա եւ կենդանացի ։

« Իսկ իրբեւ նեխեցաւ զի նորա ի վերնատանն, հրամայեաց զաղտոնի բնկենուլ ի վիճեւ ծածկել ։ Էլ զարդարէ զմի զոմն ի հումանեայ իւրոց այր պատաճառք ։ Եւ համբաւ հանէ զԱրայի լիզուլ աստուածոցն եւ յարաւ ցանել ։ Ունի ի ծածուկ ։ Եւ ոչ ումեք ի ծանօթից նորա ցուցանէ զնա ։ Եւ այնպէս հանէ համբաւ արաւելաց տիկինն Շամիրամ ։

« Յայնժամ տիրեաց Շամիրամ ի վերայ երկրին Հայաստանեայց, եւ յայնմ հետէ Ասորեստանեայց թագաւորքն տիրեցին մինչեւ ցլեռանելն Սենեքարիմայ, ապա ապստամբեցին յԱսորոց թագաւորացն ծառայութենէ » ։

Ուրիշ ընդարձակ սեղեկութիւնք որ կը գտնուին Մոլոսիսի գրոց մէջ, բարձր այլ յուսնական ազգիւրներէ առնուած են ։ Առ առաւելն կրնանք մէջ բերել աստ այն առակը, թէ « Ուշուրք Շամիրամայ ի ծով¹ » ։ Ուշուրքի գիտոյ մի իսկ եւ իսկ պիտի տեսնէ, թէ այս գրոյցս այլ նոյնպէս չի բովանդակեր պարզաբար ասորահայկական հաւատարմ Շամիրամայ եւ նորա ամուսնոյն անուանք յետ մզուելով ժամանակաւ՝ կը հասնին մինչեւ առ կտեսիսա, յորմէ օգտոր ե յայնապէս, օրինակ իմն, Յուլիոս Արիսիանոս, հայրն քրիստոնեայ բանապաշտութեան ։ Բայց մի թէ այսու հանրէ կարծել թէ այս գրոյցս քրիստոնեայք հնարեր են կամ զոնէ ձեւակերպեր են ։ Ի հարկէ կարեւոր չէ որոշակի բնագունել այդ բանը ։ Նոյնպէս Արիսիանոսի բանապաշտութիւնն մեծաւ մասամբ փիլոսոփոսէ, Պալլիփատոս կամ Ուեաոնիոսէ փոխառեալ ժառանգութիւն մ'է ։ Թեւեւս եւ կարելի է թէ Մար Արաս՝ քրիստոնեայ շատագովաց ոգւով շատ բանեւ կարելի է թէ հեթանոս ազգերէ մի առեր է, որ տեղացի բնիկ առասպելաց հետ խառնեւ է կտեսեան կամ նման զազափարնեք ։ Վասն զի զիցաբանական բանապաշտ մեկնութիւնն այն ժամանակ բոլոր ուսեալ եւ

1. Այդ պոռնկութիւնն բառին յունարէնն անշուշտ քրիստոնէական արտայայտութիւնն է ուրիշ աւելի հնազոյն՝ բայց նուազ լսիտա բանապաշտութեան մի ։

1. Մ. Խոր. Ա. մէ ։

գորգացեալ մարդկանց հասարակաց ստորուած մ'էր, եւ ոչ միայն քրմաց (ιερεεις) . եւ կամ գրուակաց (μαδவைς) : Այս պատճառաւ չեմ կարծեր՝ թէ այս եւ ուրիշ նման պատմութեանց մէջ գտնուած բանապաշտ բացատրութիւնք անպատճառ պէտք են բրիտանոնէից ընծայուիլ . շատ կարելի է թէ կը գտնուէին նոքա հեթանոս ազգեր մի մէջ :

Թէ Շամիրամայ գրոյցն ուրիշ բան չէ՝ բայց բնիկ արամէական դիւցարիաւն առաւպել մի, զայս կը հաւատտէ մեզ Շամիրամայ խաղաշած գերն, որ ճշդիւ կը նմանի բարեւոնեան դիւցապնեղութեան մէջ գտնուած սիրոյ դիւցունայն իտաթայ գերին : Նորա սարգիւտն էր՝ որդին Արամայ, սեռուանեալ դիւցազին (հրօս էπιωνυμος) Արամէացոց, զոր Հայր՝ տարօրինակ բարեմասութեամբ մի՝ անբ յաւկացուցեր են եւ իրենց ազգային դիւցազանց կարգը գտներ են : Եւսերիոս իւր Ճամանակագրութեան մէջ կը յիշատակէ զՍիրոս երկրածին . « Առ սքօք Սիրոս պատմի լեալ երկրածին . յորոյ անուն կից եւ Սիրիա առ նուանեցաւ » (Եւսեբ. Պատմիլ . Ճամանակակաւանք . վննետիկ , 1818 , էջ 96) : Արայի կանացի գեղեցկութիւնն կը յիշեցնէ մեզ Ալոնիս , Դուզի , Ատիս եւ այլ տարփաւորները մեծ դիցածօր (Ատղիկան կամ Ափրոդիտեայ) . սակայն Արա ի նմանիբ տարփաւոր Ալոնիսի՝ որ կը հաւանի եւ անձնատուր կը լինի . այլ սա ընդհակառակն բաց է ի բաց կը մերժէ Շամիրամայ սիրոյ առաջարկութիւնը , որ իրեն պատճառ կը լինի կորուստեան : Այս տեղ բաւական նմանութիւն մի կը գտնուի Գիրգամեշի դիւցազնական վէպին՝ այն հաստատման , յորում զիւցազն կը մերժէ դիւցունայն սիրային առաջարկութիւնները , եւ այն ամենուն ճակատապէր կ'ունենայ՝ որոնք իտաթի սիրոյն պատճառաւ ի կորուստ մասնեցան : Սակայն սատ եւ խանգարում մի տեղի ունեցեր է : Ատրի վիցունայն տարփաւորն , Ասուրց որդին , իւր նախնական

անունը չէ պահած , այլ հայազգոյ մի ձեռքով յԱրա փոխուեր է : Վաղոց իոյ արդէն էմին , ինչպէս նա եւ լանդրուա՝, նոյն համարեր են զայն Պրատունի էրին հետ . . . Էր հայկազին , որ ազգաւ պամփիլացի էր . եւ երբ մեռաւ պատերազմի մէջ , եւ տաններօր օրը կը վերցնէին բոլորովին նեխեալ դիակները : Նորա դիակն զանուեցաւ անաբատ եւ անապական , զոր եւ տուն տարին թաղելու համար , եւ երկոտասաններօր օրը՝ մինչ խորուկին վերայ դրուած էր՝ յարութիւն առաւ՝ : Անտարակոյց հին առաւպելր պատմեր է (Պրատուն) , թէ Արա իրօք վերստին կենդանացեր է , եւ պորգապէտ յիտին ժամանակաց բանապաշտ մեկնութիւն մ'է , որով այն բանին մէջ թաղուանայ հնարք մի նկատուեր է , որ սակայն անյալը անցեր է : Առ Մովսիսի խորենացոյ (Ա , ԺԵ) կ'ըտէ Շամիրամ . « Հրամայեցի ատուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա , եւ կենդանացին » : Մի եւ նոյն խօսքն կը գտնուի նա եւ անանուն հեղինակին մօտ (Սերէոս , էջ 5) . « Ես ասացից ատուածոց լեզուլ զվէրս նորա եւ կենդանացի » : Եւ իբրու հետեւութիւն կը յաւելու . « եւ այնպէս հանէ համբաւ արայեաց սիկինն Շամիրամ » : Սոյն արայէզք հին ազգային տանդութիւն մ'են , որք կը վերաբերին հորդէն էակաց հայկական պաշտաման : Եղնիկ եղբայրին (450ին միջոցները) իւր « Եղծ (այլ եւ այլ հեթանոս) ազանոց » գրքին մէջ կը յիշատակէ այն տարօրինակ առաւպելը , իրր թէ արայլ կը դրուած սիք երկնաւոր շանէ մի սերեալը լինին . (սպազր . վննետիկ , 1826 , էջ 90) . « Այ ի շանէ ինչ էլեալ , ընդ աներեւոյթ զօրութիւնս ինչ կեցցէ » եւ յոր՝ ժամ վերաւոր ոք գտնուի ի պատերազմի գնիցի՝ թէ լիզցէ եւ ողջացուցանիցէ , զոր

1. Collection des hist. a. et m. de l'Arménie. Հմմտ. նա եւ J. Marquart ZDMG XLIX S. 658 ff.
 2. . . . Ἡρὸς τοῦ Ἀρμενίου τὸ γένος Παμφύλου. ὅς ποτε ἐν πολέμῳ τελευτήσας, ἀναπεθέτων δεκαταίων τῶν νεκρῶν ἦδη διεσφραμένον, ἐγγιγῆς μὲν ἀνγρεσθῆ, κομμοθεῖς δὲ οὐκαθε, μέλλων θάπτεσθαι, δωδεκαταῖος ἐπὶ τῇ πορῆ κειμένου ἀνεβίω. Plato Republ. X. p. 614 B.

1. Հմմտ. G. Smith's chaldaische Genesis (գերմաներէն հրատ. Fr. Delitzsch) 1876, S. 189 ff.

արուլէզն կոչեն. այլ ամենայն օտաւայելիք են, եւ պատաւանց զրգիլինք, եւ մանաւանջ թէ ի դիւաց իսկ մուրուսթենէ» : Յայտնապէս Պրատանի Էրն այս ոգւց զօրութեամբ ողջացաւ եւ կենդանացաւ : թէ՛ այս հաւատքս սրբան ամրացք եւ հատաատուեր էր առ Հայս՝ կր ցուցնէ մեզ փառստօսի պատմած մէկ զԵպին, որ բոլորովին քրիստոնեայ ժամանակի կր վերաբերի : Երբոր, յամին 375, Հայոց մեծ սպարապետն Մուշեղ Մամիկոնեան՝ վարազդատ թագաւորին վարձած մարտապալաններուն հարուածներուն ներքեւ մեռաւ, հեթմանոց նորա կարուած զուրիւր եւ մարմինը գրին պղեկի աշտակակին տանեաց վերայ՝ ըսելով. « վասն զի այր քաջ էր, առ լէզք իջանեն եւ յարուցանեն զպա՛ » : Բայց երբ նեխեցաւ պիակն, իրենց ժայռի պէս հաստատուն հաւատքն այլ խախտեցաւ : Այն ընտանիքն՝ որ թագաւորականաց հակառակ եկեղեցական ազնուատեօմ կուսակցութեան գլուխն էր, եւ սակայն տակաւին այնչափ խոր կերպով հեթմանական գաղափարներով սոգորուած էր, — այս բանս յերաւի սաստիկ սպաւորութիւն ըրաւ ամրողապէս քրիստոնեայ դարձած երկրին վերայ : Այնուհետեւ ճկնաւորք եւ սրբազան ուսուցիչք իրենց շինիչ ճատերուն եւ քարոզութեանց պիտաւոր նիւթ ընտրեցին հեթմանոս զից անկարողութեան այն ակնյայտնի եւ աչքի զարնող օրինակը :

Արդ պնենք աստ այն զարմանալի նմանութիւնը, որ կայ ընդ մէջ անգղեկութեանց Մար Արասայ եւ փառստօսի, իրիւ պատմութեանց մէջ եւս մեռելոյն մերձաւոր ազգականը շին ուզեր հաւասար սպանելոյն մահաւան. երկու կողմերն եւս հաւատարապէս

մեռելոյն դիակը բարձր տեղ մի կը պնեն. երկու կողմերն այլ կը թաղեն դիակը նեխելուն պատճառաւ : Մակայն պատահմամբ չէ՛ որ Մար Արաս կատինայի գրոց խմբագրութիւնն օտակա մի յետոյ կ'իտնկնայ քան Մամիկոնեան ազգատունին զարմանալի կ'պուտն : Սոյն պատմական զօրոյն գրութեան ժամանակն կը համարուի, զիտաւորապէս ի Գուշմիլէ՛, 383—388 տարիներու միջոցն : Անտարակցս քրիստոնեայ հեղինակն՝ իրեն անմիջական փորձառութեանց հասեմատ աւրալէզ աստուածոց ոչնչութեան նկատմամբ՝ ձեւեր եւ յարմարցուցեր է աստապելախառն գրուցին հետեւութիւնը, եւ ներմուծեր է անդ նեխեալ պիակին տեղը զարձուածը :

Եթէ վերջնենք այս մեկնողական յաւելումս մտաբեր, կ'ունենանք պարզաբար ասորի գիցուհւոյ սիրոյն եւ իւր տարփաւորին առասպելը : Շամիրամայ աստապելախառն աւանգրութեան մէջ պահուեր է Աստղիկան զրոյցն : Կարող ենք ենթադրել թէ՛ իւր ասորի պաշտաման բնիկ նախնական սեղւոյն մէջ յԱշտիշատ, իրեն առաջին սիրոյն եղբրական վախճանը պատմող տաղին մէջ անեղցեր է՝ վհանգու—Հեթակեայ հետ նորա սրբազան հարսանեաց (երծօս Գձմոս) երգն :

Շարայաբնիկ

1. Kl. Schr. III S. 321. 334.

2. Պ. Ֆետտէ՛ Մար Արասայ պատմութեան պատկանող հայ թագաւորաց ցուցակը ուրիշ աղբեր մի կ'ընծայէ, վասն զի ըստ Մ. Խորենացւոյ՝ առնթմեր կրտսերն Արշակայ կը զնէ զՎաղարշակ իբրև թագաւորակից : Պետք է վերջնել « եղբարք — աշխարհիս » բառերը (Սեբէոս, էջ 10) իբրև եկամուտ յաւելուածներ, վասն զի թերի է զխաւոր իմաստն՝ հաւատակ ցուցման Մար Արասայ անկինն :

1. Փառասայ Ե, Լ, 2 :